Ա. ԴԻՄԻՆՇՏԱՆ

ԷՍԹԵՏԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Արդկության պատմության բոլոր ժամանակաշրջաններում գեղագիտական միտքը բացառիկ ուշադրություն է դարձրել էսթետիկական դաստիարակության հարցերին։ Անհատի հոգեկան և ֆիզիկական կատարելության հարցը եղել է բազմաթիվ փիլիսոփաների ու գեղագետների ուսումնասիրության առարկան։ Դեռ անտիկ աշխարհում ստեղծվել են տեսություններ գեղագիտական դաստիարակության մասին։ Պլատոնի, Արիստոտելի աշխատություններում անհատի ներդաշնակ դաստիարակության խնդիրները քննվում են գեղագիտության մյուս պրոբլեմների հետ սերտ կապակցված։

Հին աշխարհի այդ մեծ մտածողների մոտ կան արժեքավոր դիտողություններ գեղագիտական դաստիարակության հասարակական նշանակության մասին։ Անցյալի առանձին առաջավոր մտածողներ գեղագիտական դաստիարակությունը համարում էին հզոր միջոց հասարակության արատները բուժելու և նոր բարքեր հաստատելու գործում։ «Քաղաքական ոլորտում ամեն բարելավում պետք է ելնի բնավորության աղնվացումից,—գրում է Շիլլերը։—Բայց ինչպե՞ս բնավորու-

թյունը կազնվանա բարբարոս պետական կարգի ազդեցության տակ։ Հանուն այդ նպատակի հարկավոր է գտնել գործիք, որը պետությունը չունի և դրա համար բացել աղբյուրներ, որոնք կպահպանեն իրենց մաքրությունն ու պարզությունը քաղաքական փչացածության պայմաններում... Այդ գործիքը արվեստն է, որի աղբյուրները բացվում են նրա անմահ կերպարներում»։ Կամ՝ «... Ճանապարհը դեպի ազատությունը անցնում է միայն գեղեցիկի միջով[1]»։

18-րդ դարի լուսավորիչները գտնում էին, որ բարու հաղթանակը պայմանավորված է արվեստով, նրա կախարդիչ ուժով։ Սակայն նախամարքսյան մտածողները, կանգնած լինելով հասարակական կյանքի իդեալիստական ըմբռնման տեսակետի վրա, գերագնահատեցին արվեստի դերը սոցիալական արատները վերացնելու գործում։ Նրանց կարծիքով գեղեցիկի ընկալումը և տարածումը գեղարվեստի միջոցներով բավական է, որպեսզի կործանվի չարը և հաղթանակի բարին։ Այդ ուտոպիկ պատկերացումները հասարակությունը ազնվացնելու և ներդաշնակություն հաստատելու ուղղությամբ հեռու էին գիտությունից։ Հետագայում բուրժուազիան հեռացավ առաջադիմական գաղափարներից, և մոռացության տրվեցին անցյալի մեծ գործիչների ավանդները։

Մարքսիզմը ցույց տվեց, որ դաստիարակության հարցերը անհնարին է դիտել հասարակական կյանքի մյուս երևույթներից անջատ։ Սոցիալ-տնտեսական և քաղաքական-գաղափարական գործոնները վճռական նշանակություն ունեն հասարակության անդամների դաստիարակության գործում։ Մասնավոր սեփականատիրական աշխարհում անհնարին է հասարակության բոլոր անդամներին ներգրավել դաստիարակության ոլորտը և հաղորդակից դարձնել գիտության ու արվեստի նվաճումներին։

Կոմունիզմը իրականություն է դարձնում մարդկության լավագույն բաղձանքները. ծաղկելու և լրիվ դրսևորվելու են

---

[1] Ф. Шиллер, Собр. соч., т. VI, М., 1957, стр. 274—275, 254.

մարդու ընդունակությունները ու տաղանդը, նրա բարոյական լավագույն հատկությունները։

Էսթետիկական միտքը մեր երկրում վերելք է ապրում։ Լույս են տեսել մեծ թվով ուսումնասիրություններ ու մենագրություններ, ուսումնական ձեռնարկներ, որտեղ շարադրված են մարքս-լենինյան գեղագիտության հիմնական պրոբլեմները։ Ստեղծվել է մեծ գրականություն էսթետիկական դաստիարակության հարցերի շուրջը, որը մեր օրերում ունի կենսական, պրակտիկ նշանակություն։ Այժմ մարքս-լենինյան էսթետիկայի հիմունքները, որպես ծրագրային առարկա, մտցված են բուհերի, տեխնիկումների, ինչպես և որոշ դպրոցների ավարտական դասարանների ուսումնական պլանների մեջ։ Քաղաքական լուսավորության ցանցում կազմակերպվել են տեսական սեմինարներ, որտեղ աշխատավորները ուսումնասիրում են էսթետիկայի հարցերը։

Կյանքը հրամայաբար թելադրում է զբաղվել ոչ միայն դաստիարակության տեսական հարցերով, այլև պահանջում է կազմակերպել գործնական աշխատանք այդ ուղղությամբ։ Այդ շնորհակալ գործը կլրացնի այն բացը, երբ ոչ հեռու անցյալում գեղագիտական դաստիարակության հարցերով դպրոցը և կուլտուր-լուսավորական հիմնարկները զբաղվում էին ոչ պատշաճ չափով։

Կուլտուրական հեղափոխությունը սոցիալական տեսական պրոցես է, որը բովանդակում է սոցիալիստական հասարակարգի զարգացման պատմական ամեն մի շրջանի համար լուծման յուրահատուկ եղանակներ, միջոցներ ու խնդիրներ՝ պայմանավորված երկրի կուլտուր-տնտեսական հնարավորություններով։ Ընդհանրացնելով սովետական հասարակարգի զարգացման փորձը և կանխագծելով մեր գալիքը, կուսակցությունը որոշակիորեն իր նոր ծրագրում ընդգծեց, որ գիտական աշխարհայացքի ձևավորման հետ մեկտեղ արդի փուլում կենսական անհրաժեշտություն է դառնում «մարդկային անհատի բազմակողմանի և ներդաշնակ զարգացումը»։ Նոր հասարակարգի մարդուն հատուկ են հոգևոր հարստություն, բարոյական անաղարտություն և ֆիզի-

կական կատարելություն մարմնավորող գծերը։ «Գեղարվեստական սկզբունքն է՛լ ավելի ոգեշունչ կդարձնի աշխատանքը, կգեղեցկացնի կենցաղը և կազնվացնի մարդուն»։ Ծրագրի այս սեղմ դրույթները մեծ խոհերի տեղիք են տալիս։ Իրոք, գեղեցիկը դառնում է մեր ապրելակերպի ցուցանիշներից, մեր կյանքի մղումներից մեկը։ Գիտականորեն ղեկավարելով կոմունիստական հասարակարգի կառուցումը, մեր կուսակցությունը նոր մարդու դաստիարակությունը և աշխարհայացքի ձևավորումը դիտում է որպես առաջնահերթ խնդիր։

Կոմունիզմը ենթադրում է անհատի բազմակողմանի և ներդաշնակ զարգացում, նեղ պրակտիցիզմի, անստեղծագործ աշխատանքի բացառում։ Կոմունիզմը չի վերացնի աշխատանքի հասարակական բաժանումը, բայց կստեղծի բոլոր բարենպաստ պայմանները մարդկային ունակությունների լրիվ դրսևորման համար։ Այն հասարակության ամեն մի անդամին ստեղծագործական աշխատանքի ու կրթության հավասար հնարավորություններ կընձեռի։ Կոմունիզմի ժամանակ իսպառ կվերանան մարդկանց միջև գոյություն ունեցող անհավասարության դրսևորումները կյանքում։ Դա մեծ ազդակ կհանդիսանա ստեղծագործական մտքի զարգացման համար։

Մարդկանց ստեղծագործական կարողությունների բացահայտման գործում ուրույն նշանակություն ունի էսթետիկական դաստիարակությունը, որը նպաստում է անհատի երևակայության զարգացմանը, գեղեցիկի զգացման պատվաստմանը, հոգեկան խառնվածքի, ճաշակի և պատկերավոր մտածողության ունակությունների կատարելագործմանը։ Եթե մարդը,— ինչպես ասում է Մ. Գորկին,— իր բնույթով արվեստագետ է, ապա էսթետիկական դաստիարակությունը զարգացնում է նրա էության այդ կողմը։

Գրականության մեջ էսթետիկական և գեղարվեստական դաստիարակության հասկացությունները հաճախ նույնացվում են, որը ճիշտ չէ։ Այս հասկացությունները իրար

չեն հակասում, բայց առաջինը ավելի լայն է, քան երկրորդը։ Գեղարվեստական դաստիարակությունը ենթադրում է հասարակության անդամներին հաղորդակից դարձնել արվեստին, ընդգրկել գեղարվեստի ոլորտը։ Էսթետիկական դաստիարակությունը, բացի արվեստից, դրսևորվում է նաև մարդու գործունեության բոլոր մյուս բնագավառներում ու պարագաներում։

Էսթետիկական հարաբերությունն իրականության նկատմամբ բովանդակում է իր մեջ մարդու միտքն ու զգացմունքները, համոզմունքն ու կամքը։ Իրականության էսթետիկական ճանաչումը ենթադրում է զգացմունքի ու բանականության միասնություն։ Իրականության էսթետիկական ընկալումը հարստացնում է մարդու աշխարհայացքը և աշխարհըմբռնումը անմիջական տպավորություններով։ Իրականության նկատմամբ էսթետիկական հարաբերությունն ակտիվ ու բազմաբովանդակ վերաբերմունք է, որն արտացոլվում է ոչ միայն արվեստի ստեղծագործություններում, այլև բոլոր պարագաներում, որոնց հետ առնչվում է մարդը։ Մարդու համար էսթետիկական ընկալման առարկա կարող են դառնալ բնության հոյակապ տեսարանները, հայրենասիրական սխրանքը, աշխատանքային հաջողությունը, սիրած աղջկա ժպիտը, արվեստի երկը...

Մեզանում դեռևս լրիվ չի հաղթահարված էսթետիկական դաստիարակության խնդիրները գեղարվեստական դաստիարակության հարցերով սահմանափակելու ոչ ճիշտ գիծը։ Այդպիսի մոտեցման դեպքում աղճատվում ու փոքրացվում է գեղագիտության շրջանակը, միակողմանի բնույթ է ստանում էսթետիկական դաստիարակությունը։ Ժողովրդին էսթետիկական ոգով դաստիարակելը նշանակում է՝ սովորեցնել նրան ընկալելու կյանքի գեղեցիկը, ապրել ու աշխատել այդ գեղեցիկի չափանիշներով, հաղորդակից լինել արվեստին։ Էսթետիկական դաստիարակություն ստացած մարդու մոտ կրկնապատկվում է աշխարհազգացումը և ինքնաճանաչումը։ Գեղագիտական զգացումը համապարփակ,

ամբողջական զգացում է, որի մեջ բանական և հուզական չափանիշները միաձուլվում են։

Կոմունիզմը, հանդիսանալով աշխատավոր մասսաների նվիրական իդեալը, իրականություն կդարձնի մարդկանց վսեմ տենչանքներն ու բաղձանքները, կուժեղացնի նրանց գեղագիտական ակտիվությունը։ Անհատի և հասարակության ներդաշնակ փոխհարաբերության հաստատումը կհարստացնի մարդու ներքնաշխարհը, կարթնացնի նրա մեջ գեղեցիկը։ Որքա՞ն է նեղացնում մարդու աշխարհըմբռնումը սեփականատիրական զգացումը, հարստանալու տենչը։ Հարստանալու մոլուցքը խեղդում է մարդկանց մեջ հոգևկան վսեմ գծերը, դարձնում նրանց փողի քսակի գերի։ Կարելի՞ է արդյոք գեղեցիկ համարել այն ապրելակերպը, երբ առանձին մարդիկ փողն ու ունեցվածքը դարձնում են կուռք։ Նման մարդկանց մոտ բթանում են ազնիվ ու գեղեցիկ զգացումները, նրանք չեն նկատում կյանքի իսկական արժեքները, դառնում են «հոգևկան ներքինիներ»։ Էսթետիկական զգացումով օժտված մարդը գեղեցիկի սկզբունքներով իմաստավորված գնահատական է տալիս կյանքի այնպիսի երևույթներին, որոնց մասին օրենսգրքում համապատասխան հոդված չի նախատեսվում։ Փոխադարձության սկզբունքով կատարված դրական արարքը դուրս չի գալիս ողջամտության սահմաններից և ընդհանուր առմամբ ընդունվում է որպես սովորական մարդկային փոխհատուցման պատրաստակամություն։ Կարելի՞ է արդյոք նույն չափանիշով գնահատել անձնազոհությունը, փոխհատուցման չսպասող արարքը. իհարկե ոչ։ Նման արարքները գեղեցիկ են։ Մարդկային բնավորության բարդ հոգեբանական երանգները կարելի է հասկանալ, վեր հանել ու գնահատել արվեստի գեղագիտական չափանիշներով ու միջոցներով։ Ստորաքարշությունը, անսկզբունքայնությունը, խորամանկությունը և մարդկային վարքագծի մյուս այլանդակ կողմերը մերկացվում ու դատապարտվում են ոչ այնքան իրական նորմերով, որքան բարոյա-հոգեբանական,

էսթետիկական վերաբերմունքով։ Վ. Ի. Լենինը նկատել է, որ սոցիալական անհավասարության դեմ պայքարելու գիտակցումը լայն մասսաների շրջանում պետք է արթնացնել ոչ միայն նրանց բանականության մեջ, այլև զգացումների և ապրելակերպի մեջ, որպեսզի նրանք բնական ատելությամբ լցվեն դեպի ունեզրկողներն ու կեղեքիչները։

Սոցիալիստական հասարակարգը գեղագիտականի դրսևորման լայն հնարավորություններ է ստեղծում։ Սոցիալական և ազգային հավասարության հաստատումը մեր երկրում ազդակ է հանդիսանում բազմազգ ժողովրդի ստեղծագործական ունակությունների զարգացման համար։ Աշխատանքը դառնում է փառքի ու պատվի գործ, իսկ աշխատանքի մարդը՝ նոր աշխարհի կերտող։ Եթե մարդն արտադրում է գեղեցկության օրենքների համաձայն (Կ. Մարքս), ապա նրա գործունեության մեջ գեղեցիկի տարրերը սոցիալիստական հասարակարգում դառնում են արտադրության ոգին, հոգեկան սնուցիչը։ Կապիտալիստական արտադրանակը բանվորին դարձնում է մեքենայի կցորդը, սպանում նրա ստեղծագործական ավյունը, գեղեցիկի զգացումը։ Չարլի Չապլինը «Մեծ քաղաքի կրակները» և «Նոր ժամանակներ» կինոկատակերգություններում չգերազանցված վարպետությամբ պատկերել է մարդու՝ հաստոցի մասնիկի վերածվելը, նրա հոգեկան սնանկացումը։

* * *

Աշխատավորության գեղագիտական դաստիարակության բովանդակությունը և շրջանակները լրիվ պարզաբանելու համար անհրաժեշտ է ցույց տալ աշխատանքի էսթետիկայի էությունը։

Ժամանակին դեռ Հեգելն է նկատել, որ արտադրության ու վերարտադրության պրոցեսում գործում են իրար բացառող, բայց միաժամանակ մեկը մյուսով պայմանավորվող՝ ազատության ու անհրաժեշտության տենդենցները։ Անցյալի գեղագիտական միտքը էսթետիկականի դրսևորման հիմնական ոլորտը դիտում էր մարդու հոգեկան գործունեության,

մասնավորապես գեղարվեստական ստեղծագործության մեջ։ Այդ է պատճառը, որ անցյալի մտածողների մոտ չկան հանգամանալից ուսումնասիրություններ տվյալ հարցի շուրջը։ Սակայն չպետք է ժխտել, որ նրանց աշխատություններում կան հանճարեղ մտքեր, ինքնատիպ բնութագրեր ստեղծագործական աշխատանքի գեղագիտական հատկանիշների մասին։ Հեգելը նշել է աշխատավորի ինքնուրույնության բացակայությունը, նրա կախվածությունը մարդկային հարաբերությունների կծիկից։

Մարքս-լենինյան գեղագիտությունը գիտական հիմքերի վրա դրեց էսթետիկականի առաջացման ու ձևավորման արմատները արտադրության մեջ, վեր հանեց այն սոցիալական մոտիվները, որոնք նպաստում կամ արգելակում են գեղեցիկի դրսևորմանը։

Մարքսիզմը ցույց տվեց, որ բոլոր արտադրահեղանակներում գեղագիտականի սկզբունքը բխում է արտադրության բնույթից։ Բայց այն լրիվ է դրսևորվում միայն սոցիալիստական հասարակարգում։

Արտադրության գեղագիտական սկզբունքը իր մեջ է ներառնում երեք անկապտելի և փոխադարձորեն կապակցված մոմենտներ՝

ա) գեղեցիկն աշխատանքային պրոցեսում, արտադրության կատարելագործման, վարպետության բարձրացման մեջ, բնության տարերային ուժերի վրա մարդու ներգործման և այդ ուժերի օգտագործման մեջ.

բ) գեղեցիկը հասարակական-տնտեսական հարաբերություններում, ինչպես նաև աշխատանքի կոնկրետ արտադրական պայմաններում.

գ) գեղեցիկը աշխատանքի արդյունքի մեջ կամ աշխատանքային գործունեության արդյունքի էսթետիկան։

Աշխատանքի արդյունքը հոգեկան մեծ բավականություն է պատճառում մարդուն։ «Մարդկայնացնելով բնությունը, մարդը ստեղծում է երկրորդ բնությունը» (Մարքս), որը ծառայում է իրեն։ Ստեղծելով նյութական ու հոգևոր արժեքներ, որոնք իր գործունեության արգասիքն են, մարդը վեր

է բարձրանում բնությունից, դառնում է բնության տնօրեն ու վերափոխիչ։ Բայց այդ պատճառաբանված ինքնավստահության զգացումը, որն առաջանում է մարդու մոտ բնության նկատմամբ, կորցնում է իր հմայքն ու գեղեցկությունը սեփականատիրական արտադրական հարաբերություններում։ Երբ մարդն իր ստեղծած արժեքի տերը չէ, ապա այն գեղագիտական զգացումը, որը պետք է առաջանար աշխատանքի արդյունքից, լրիվ չի դրսևորվում։ Մինչդեռ գեղագիտական զգացումը կարևոր գործոն է, շարժիչ ուժ հասարակարգի զարգացման համար։

Էսթետիկական հաճույք կարող է պատճառել մարդուն ոչ միայն մասնագիտացված աշխատանքի արդյունքը, այլև անվճար, հասարակական աշխատանքը։ Երևանցին մեծ բավականություն է ստանում ու հպարտ է, որ շատ ու շատ լայնարձակ պողոտաների ու փողոցների կառուցման գործում կա նաև իր աշխատանքի մասնիկը։

Ժողովրդական տնտեսության նվաճումների ցուցահանդեսները ցուցադրում են ոչ միայն մեր առաջընթացը գիտության ու տեխնիկայի ասպարեզում, միաժամանակ նրանք աշխատանքի գեղեցկության տաղավարներ են։

Կարո՞ղ է արդյոք իրեն երջանիկ համարել այն բանվորը, որը չգիտե ի՞նչ է արտադրում և ո՞ւմ է ծառայում։ «Դարշնագույն ոստայն» կինոնկարում գերմանացի պրոգրեսիվ կինոգործիչները գեղարվեստական համոզչականությամբ ցույց են տվել այն հոգեկան ողբերգությունը, որ ապրեցին գերմանացի բանվորները ֆաշիզմի իշխանության օրոք։ Ֆիլմում մեծ վարպետությամբ պատկերված է, թե ինչպես մի կտոր հաց վաստակելու համար գործազուրկ բանվորները աշխատանք են գտնում ռազմական արդյունաբերության ձեռնարկություններում, իսկ իրենց աշխատանքի արդյունքը մահ է սփռում աշխարհով մեկ։ Հանդիսատեսը գալիս է այն եզրակացության, որ ոչ բոլոր աշխատանքների արդյունքն է պատճառում գեղագիտական ուրախություն։ Գեղեցիկը հանրօգուտ, կյանքը հաստատող աշխատանքն է։

Գեղեցիկի զգացումը մարդու մոտ ծագում է ոչ միայն աշ-

խատանքի արդյունքը տեսնելիս, նա հայտնվում է, ծնվում է հենց աշխատանքի ժամանակ։ Գործարանային ժխորը, հաստոցների աղմուկը, բանվորների համաչափ ու ռիթմիկ շարժումները որոշակի էսթետիկական տրամադրություն են առաջացնում։ Սխալ է այն տեսակետը, թե գեղեցիկը հիմնականում ֆիզիկական լարում պահանջող աշխատանքն է։ Այդ տեսակետը իր արտացոլումն է գտել առանձին նկարիչների կտավներում, երբ ընդգծված ձևով պատկերվում են լարված և ուռուցիկ մկաններ, մոռացության տալով բանվորի դեմքը՝ հոգու հայելին։ Մարդկային բանականության մեծագույն հայտնագործությունների դարում, երբ բանվորի աշխատանքը ինժեներա-տեխնիկական անձնակազմի աշխատանքի տարատեսակն է, հնացած են այդ և նման ուրիշ տեսակետներ։ Մեր նկարիչները ժամանակակից բանվոր նկարելիս պետք է ցույց տան նրա ինտելեկտուալ խորիմաստ դեմքը և միաժամանակ, իհարկե, ատլետիկ մարմինը։ Սոցիալիստական իրականության համար այժմ տիպական են կրթված ու զարգացած բանվորները, որոնք արտադրության պրոցեսում հաջողությամբ զուգորդում են մտավոր ու ֆիզիկական աշխատանքը, երբ ծանր, մարդուն հոգնեցնող պրոցեսները կատարում է մեքենան։ Ղեկավարելով ավտոմատացված ու մեքենայացված աշխատատար պրոցեսները, բանվորն ավելի է զարգացնում իր ստեղծագործական միտքը։ Բազմապատկվում են նրա նորարարական հնարանքները, աշխատանքը դառնում է ավելի հաճելի ու գեղեցիկ։

Աշխատանքի պրոցեսն ավելի հաճելի կլինի և արդյունավետ, եթե աշխատասենյակներն ու սրահները լինեն մաքուր և խելացի կահավորված։ Գործարանի ներսում, մանավանդ ցեխերում, պետք է հատուկ ուշադրություն դարձվի աշխատանքային էսթետիկայի կարևոր հարցերին։ Գույնը ամենապարզ և ամենահաճախ ընկալվողն է, որը պահանջում է մեր արտադրության հրամանատարներից ու տնտեսվարներից՝ ներդաշնակ գույներով ներկել հաստոցներն ու սարքերը, գործարանային ինտերյերը։ Դա հոգեկան լիցք կհաղորդի բանվորներին։ Որքան տհաճ տպավորություն են

թողնում բանվորի, այնպես էլ այցելուների և հաճախորդների վրա Երևանի որոշ գործարանների ու ֆաբրիկաների գորշ ու անգույն հատոցները, կամ մրով ծածկված պատերը։ Մեր զարգացման ներկա փուլում ուղղակի աններելի է ձեռնարկությունները հակաէսթետիկական վիճակում պահելը։ Ժամանակն է մեծ ուշադրություն դարձնել աշխատանքի էսթետիկայի հարցերին։ Կոմունիստական աշխատանքի կոչման համար պայքարող ձեռնարկություններն ու բրիգադները պարտավորություններ վերցնելիս հատուկ կետեր են մշակում այդ ուղղությամբ։

Էսթետիկական զգացման և ճաշակի պատվաստման ու զարգացման համար կարևոր նշանակություն ունի գեղեցկացումն այն բոլոր միջավայրերի, որտեղ ընթանում է մարդու կյանքը. դրանցից ամենակենսականը բնակարանն է, որտեղ մարդը ծննդյան օրից մինչև ծերություն զգում է ճարտարապետության ներգործությունը։ Ճարտարապետական կոթողից ստացած տպավորությունը հարստացնում է մարդու էսթետիկական պատկերացումները ամբողջականության, ծավալի, հեռանկարի ու կոնտրաստի մասին։ Բայց ինչպիսի հրապուրիչ տեսք էլ ունենա շենքի արտաքինը՝ ֆասադը, այն չի տպավորվի մարդու հոգու ու գիտակցության մեջ, եթե չի համապատասխանում իր ֆունկցիոնալ նպատակներին։ Ցավոք սրտի պետք է նշել, որ Երևանի մի շարք շենքեր հեռու են իրենց նպատակին ծառայելուց։ Այժմ, երբ բազմաթիվ ընտանիքներ ստացել են բարեկարգ, կոմունալ հարմարություններով բնակարաններ, էական նշանակություն է ստանում կենցաղի գեղեցկացման հարցը։ Նման բնակարանները ընձեռում են լայն հնարավորություններ։ Հնարամիտ տնտեսուհին կարող է բնակարանը կահավորել այնպես, որ հաճելի լինի և՛ տնեցիների, և՛ հյուրերի համար։ Կոմունիստական կենցաղը կահույքի արդյունաբերության աշխատողներից պահանջում է արվեստի աստիճանի բարձրացնել արտադրությունը, թողարկել ճաշակով ու գեղեցիկ արտադրանք։ Անհրաժեշտ է կինոյի, ռադիոյի, հեռու-

տատեսության միջոցով ժողովրդին հաղորդակից դարձնել գեղեցիկ կենցաղավարության։

* * *

Ժողովրդի էսթետիկական դաստիարակության գործում առանձնահատուկ տեղ են գրավում արվեստն ու գրականությունը, որոնց անընդհատ աճող դերն ու նշանակությունը մեր օրերում դժվար է գերագնահատել։ Բազմակողմանիորեն արտացոլելով հասարակական կյանքը, արվեստն ու գրականությունը գեղարվեստական ընդհանրացման միջոցով գեղագիտական գնահատական են տալիս կյանքի երևույթներին։ Արվեստը վերհասարակական երևույթ չէ. արտացոլելով կյանքը, այն որոշակի դասակարգային դիրքերից պաշտպանում կամ խարազանում է մարդկային հարաբերությունները ու արարքները։ Արվեստի հասարակական ուժը կայանում է նրանում, որ այն ոչ միայն հաստատում է առաջավոր իդեալներ, այլև բացահայտում և դիմակազերծում է չարն ու այլանդակը։ Արվեստի նրբանկատ ու շրջահայաց, զգայուն և ուշիմ տեսադաշտն ընդգրկում է կյանքի բոլոր երևույթները։ Արվեստն ու գրականությունը սովորեցնում են մարդկանց ճիշտ կողմնորոշվել կյանքում, հուշում են նրանց խուսափել անվայել արարքներից։ Գեղարվեստի դասական գործերը բռնել են ժամանակի քննությունը և շարունակում են մարդկանց մեջ արթնացնել վսեմ զգացումներ, պայծառ խոհեր։

Անցյալի արվեստում գեղեցիկը հայտնվել է մարդկանց անուրջներում ու անհաս բաղձանքի նման քարացել քանդակներում ու ճարտարապետական կոթողներում, մարմնավորվել է վարպետ-գեղանկարիչների կտավներում, երգերում ու բանաստեղծություններում։ Նոր հասարակարգի կառուցման շնորհիվ վերանում են այն բոլոր պատնեշները, որոնք բաժանում էին արվեստը ժողովրդի կյանքից։ Սոցիալիստական հասարակարգում արվեստի ու գրականության դրական տենդենցները կապվում են կոմունիստական

հասարակարգի կառուցման օրինաչափությունների հետ։ Մեր հասարակարգում արվեստն ու կյանքը սերտորեն առնչվում են իրար։ Այդպիսի փոխներգործության ու փոխազդեցության շնորհիվ հոգեպես հարստանում է սոցիալիստական իրականությունը, իսկ արվեստն ու գրականությունը մոտենում են ժողովրդի կյանքին։ Կյանքի գեղեցիկն արվեստում դրսևորվում է ավելի վառ ու գունեղ, որի շնորհիվ մենք ավելի ենք հասկանում մեր մարդկանց բնավորությունը, ձգտումները, հոգեկան խառնվածքը։ Սովետական մարդու էսթետիկական պահանջմունքներին արձագանքում են նաև անցյալի դասական արվեստի և գրականության գործերը։ Մեր խոհերին ու զգացումներին խորթ չեն Հոմերոսն ու Դանթեն, Միքելանջելոն ու Ռեմբրանդտը, Բեթհովենն ու Թումանյանը և շատ ուրիշ մեծություններ։ Գեղարվեստի լավագույն նմուշները նոր մարդու դաստիարակության գործում անգնահատելի դեր են խաղում, նպաստում են բացահայտելու մարդկանց մեջ թաքնված գեղեցիկ գծերը։ Մեծ գրողներն ու արվեստագետները նկատել են, որ գեղարվեստը մարդուն ավելի է մարդկայնացնում։ Արվեստի ստեղծագործության միջոցով մարդը ճանաչում է ինքն իրեն, գիտակցում է իր ապրելակերպի և վարքագծի դրական ու թերի կողմերը։ Արվեստի ներգործության շնորհիվ մարդը, բացի ինքնաճանաչումից, ավելի լավ է հասկանում կյանքը, վերապրում ու կիսում է շրջապատի մարդկանց ուրախությունն ու տխրությունը։ Գեղարվեստական գործերից ստացած տպավորությունը կարող է էական ու վճռական նշանակություն ունենալ մարդու կյանքի, նրա դավանանքի, քաղաքական համոզմունքների ձևավորման համար։ Հեղափոխական շատ ու շատ գործիչներ կյանքի այդ դժվարին ուղին աներկբայորեն ընտրել են արվեստի ստեղծագործությունից ստացած խոր տպավորությունների տակ։ Երբ կարդում ենք մարդկության առաջադիմության համար պայքարած հերոսների կենսագրությունը, ապա նրանց օրագրերից պարզ երևում է, թե նրանց համար ինչքան հարազատ է եղել գեղարվեստական երկը, նրա գրական կերպարը։ Չի կարելի նորից

ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀՍՍՀ ԳԱ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ ԳՐԱԴԱՐԱՆ Библиотека Акад. Наук Арм. ССР

ու նորից շեշտատակել Վլադիմիր Իլյիչ Լենինի աշխարհայացքի ձևավորման վրա գեղարվեստի թողած վիթխարի ազդեցության մասին։ Պատանի Ուլյանովի մեջ ատելությունը դեպի սոցիալական անհավասարությունը արթնացրել են Նեկրասովը, Սալտիկով-Շչեդրինը, Գլեբ Ուսպենսկին։ Ինչպիսի՜ ակնածանքով է արտահայտվել Վլադիմիր Իլյիչը հեղափոխական երգերի, Բեթհովենի ազատատենչ ու ոգեշնչող էրաժշտության մասին։ Ցարական ինքնակալության դեմ աշխատավորությանը պայքարի են հանել Մաքսիմ Գորկու Մրրկահավը, Դանկոն, Բազեն, Պավել Վլասովը, Հակոբ Հակոբյանի բոցաշունչ բանաստեղծությունները։ Նոր աշխարհի ծնունդը գեղարվեստորեն մարմնավորվեց Մայակովսկու, Ջարենցի, Ալեքսեյ Տոլստոյի, Շոլոխովի, Ֆադեևի պոեմներում ու վեպերում։ Սովետական դասական արվեստի գործերը մեծ նշանակություն ունեցան նոր աշխարհը կառուցողների դաստիարակության գործում։ Հայրենական պատերազմի տարիներին արվեստն ու գրականությունը սովետական բազմազգ ժողովուրդներին պայքարի էին կոչում ֆաշիստական հրոսակախմբերի դեմ։

Արդի պայմաններում մեր արվեստն ու գրականությունը ճշմարտացի և վառ կերպով բացահայտում են ժողովրդի աշխատանքային սխրանքների գեղեցկությունը, կոմունիզմի համար մղվող պայքարի վիթխարիությունն ու վեհությունը։ Բնական է, որ ուրիշ ի՞նչ կարող է արվեստագետին ավելի մեծ բավականություն պատճառել, քան այն գիտակցությունը, որ իր տաղանդն ամբողջովին նվիրում է կոմունիզմի կառուցման համար ժողովրդի պայքարին, որ իր ստեղծագործություններն ընդունվել և բարձր են գնահատվել ժողովրդի կողմից։ Անցյալում և այժմ կապիտալի աշխարհում հազվադեպ է լինում, երբ գրողն ու արվեստագետը ակտիվ մասնակցություն են ցուցաբերում հասարակական կյանքին։ Մեր երկրում մեծ չափերի է հասնում լավագույն գրողների հրատարակած գրքերի տպաքանակը։ Վաղուց ի վեր արվեստը մտել է մեր ժողովրդի կենցաղը, դարձել է նրա խորհրդատուն, ուսուցիչն ու բարեկամը։ Օտարերկրացինե-

րին զարմանք է պատճառում այն հանգամանքը, որ Մոսկվայի սպորտի պալատում տեղի ունեցած պոեզիային նվիրված երեկոներին քսան հազարանոց դահլիճը միշտ լեփ-լեցուն է։ Մեր իրականությունը չիմացողները ուղղակի ապշում էին այն լավատեղյակության համար, որ ցուցաբերում էին դահլիճում նստած ընթերցող-ունկնդիրները, որոնք բացի բանաստեղծների գործերն իմանալուց, խստապահանջ էին նրանց նկատմամբ։ Նման օրինակներ կարելի է բերել ցանկացած սովետական քաղաքից ու գյուղից։ Եթե կապիտալի աշխարհում արվեստը կտրված է ժողովրդից և հիմնականում այսպես կոչված ընտրյալների (էլիտայի) մենաշնորհն է, ապա սոցիալիզմի պայմաններում նա կոչված է բավարարելու ժողովրդի էսթետիկական պահանջները։

Կուսակցության ծրագրում ձևակերպված են մարքս-լենինյան էսթետիկայի զարգացման կարևորագույն տեսական դրույթները, սահմանված են գրականության և արվեստի խնդիրները արդի էտապում։ Կոմունիստական կուսակցությունը գրականության և արվեստի զարգացման գլխավոր գիծը համարում է ժողովրդի կյանքի հետ ունեցած կապերի ամրապնդումը, սոցիալիստական իրականության հարստության ու բազմազանության ճշմարտացի և մեծ գեղարվեստականությամբ արտացոլելը։

Կյանքի ճշմարտացի արտացոլումը արվեստում ունի գաղափարական խոր իմաստ։ Առաջադեմ գաղափարը կյանքի հայելին է, նա ընդհանուր ձևով է ի մի բերում կյանքի բնորոշ երևույթները, ճիշտ պատկերացում է տալիս իրականության մասին։ Ճանաչելով կյանքը, մասնակից լինելով կյանքի կերտմանը, արվեստագետը գաղափարը առաջին հերթին ընկալում է ոչ թե տեսական տրակտատներից, այլ ռեալ իրականությունից։ Արվեստագետի ակտիվ մասնակցությունը երկրի հասարակական ու քաղաքական կյանքին ստեղծագործական նվաճումների գրավականներից է։ Սովետական երկրի արվեստագետը պասսիվ դիտողի դերում չէ, նա իր արվեստով հաստատում է գեղեցիկը, խարազանում ու մերկացնում է չարը, անմարդկայինը։

էսթետիկական ներգործման միջոցով արվեստը բացահայտում է կյանքում առաջացած մարդկային հարաբերությունների նոր գծեր ու կոնֆլիկտներ։ Արտացոլելով մարդուն, արվեստը նրան չի վերցնում միակողմանի, նրան չի կտրում, չի մեկուսացնում այն բարդ ու բազմակողմանի կապերից, որոնք շրջապատում են մարդուն։ Գեղարվեստը մարդաբանությունից և հասարակագիտությունից տարբերվում է նրանով, որ մարդուն ուսումնասիրելու իրեն հատուկ դիտակետն ունի։ Եթե մարդաբանը մարդուն ուսումնասիրում է իբրև բիոլոգիական էակ, իսկ սոցիոլոգը՝ իբրև հասարակական հարաբերությունների միագումար, ապա արվեստագետը մարդուն դիտում և պատկերում է ոչ միայն իր բոլոր կողմերով, իբրև մի ամբողջության, այլև մոտենում է նրան էսթետիկական տեսանկյունով, տիպական դրսևորումների միջոցով։ Մարդուն բնութագրել նշանակում է ի հայտ բերել ու գնահատել նրա բոլոր արարքները, պարզել նրա իսկական դեմքը։ Բարոյական նորմաները արվեստում ուղղակի ձևով հանդես չեն գալիս, իսկ բարոյախոսությունը բխում է ստեղծագործության մեջ պատկերված դեմքերի գործունեությունից, դեմքեր, որոնց կյանքն ու ճակատագիրը միջնորդավորված ձևով ուսանելի են դառնում ընթերցողին, հանդիսատեսին, ունկնդրին։

Արվեստասերն արվեստի ստեղծագործությունների պասիվ «սպառողը» չէ, նա նույնպես այս կամ այն չափով ստեղծագործող է։ Երբ մենք դիտում ենք Ռեպինի նկարները, մեր կենսափորձը լրացնում է նկարի բովանդակությունը։ Սիրահարված պատանին կամ օրիորդը Տերյանի բանաստեղծությունները կարդում են այնպիսի շնչով, կարծես իրենք լինեն այդ գողտրիկ ոտանավորների հեղինակները։ Իսկական արվեստի ստեղծագործության նկատմամբ անհնար է անտարբեր մնալ, այն ալեկոծում է մարդու հոգին, մղում նրան սխրանքների։ Իր «Ինքնակենսագրության» մեջ անգլիացի մեծ բնագետ Չ. Դարվինը ափսոսանքով նշում էր, որ միակողմանիորեն տարված լինելով բնագիտությամբ՝ ինքը քիչ ուշադրություն է նվիրել արվեստներին, որը

և իր հետ բերել է որոշ հոգևոր ունակությունների «բթացում»։ «...Եվ եթե ես նորից վերապրեի իմ կյանքը,— գրում է Դարվինը,— ես ինձ համար կանոն կսահմանեի՝ շաբաթը մեկ անգամ կարդալ որոշ քանակությամբ ոտանավորներ և լսել որոշ քանակությամբ երաժշտություն... Այդ ճաշակների կորուստը հավասարազոր է երջանկության կորստին և թերևս վնասակար կերպով է անդրադառնում մտավոր ընդունակությունների վրա, որովհետև թուլացնում է մեր բնույթի հուզական կողմը»։ Հարաբերականության տեսության ստեղծող, 20-րդ դարի հանճար Ալբերտ Էյնշտեյնն ասել է. «Ինձ գերազույն երջանկություն են պատճառում արվեստի ստեղծագործությունները։ Նրանցից ես այնպիսի հոգևոր երանություն եմ քաղում, որպիսին չեմ քաղում ոչ մի ուրիշ բնագավառից»։ Կյանքի ամեն պարագայում արվեստը մարդու ուղեկիցն է, նրա ձգտումների ու իղձերի խորհրդատուն, գաղտնիքների ու արարքների միակ վկան։ Հարստացնելով կյանքի երևույթների գեղագիտական ընկալման շրջանակները նոր երանգներով ու գույներով, արվեստը ներխուժում է մարդկային գիտակցության ու հոգևոր կերտվածքի ամենախոր գաղտնարանները։ Պատահական չէ, որ հանդիպումը իսկական արվեստի ստեղծագործությունների հետ մարդկանց էսթետիկական ուրախություն է պատճառում։ Դժվար է բառերով նկարագրել այդ գեղեցիկ հոգեվիճակը, որը մարդուն աղնվացնում է ու վեհացնում։ Արվեստի իդեալը ոգևորում է մարդուն, ուժեղացնում նրա մեջ սերը դեպի կյանքը, ապագան։

Կոմունիզմը ավելի կզարգացնի մարդկանց գեղագիտական ունակությունները, կատարյալ կդարձնի մարդկանց ապրելակերպն ու հասարակական հարաբերությունները, արվեստի աստիճանի կբարձրացնի մարդու առօրյան, աշխատանքային գործունեությունը։

Կոմունիզմի կառուցման ժամանակաշրջանում նոր բովանդակություն են ստանում աշխատավորության էսթետիկական դաստիարակության գործը, նպատակն ու խնդիրնե-

բը։ Էսթետիկական դաստիարակությունը մեր օրերում դառնում է կենսական խնդիր, այն կոմունիստական դաստիարակության բաղկացուցիչ մասն է, էական կողմը, որով և պայմանավորվում է նրա հասարակական մեծ նշանակությունը։